



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 նոյեմբերի 2014 թվականի N 175 Ա

«ԿԱՊԱՆԻ N 6 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ  
ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ԵՎ ՀՈՒՇԱՆՎԵՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի  
19-րդ հոդվածի 1-ին կետով և համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի  
21-ի <<Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին>> N 7Ա որոշմամբ  
հաստատված կարգի, որոշում եմ՝

1. Մատաղ սերնդի դաստիարակության, կրթության կազմակերպման գործում ներդրած  
ավանդի համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի  
շնորհակալագրով և հուշանվերով պարգևատրել «Կապանի N 6 հիմնական դպրոց»  
պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարինե Դավթյանին:
2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող  
անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ս.ԽԱՀՆԱՏՐՅԱՆ

2014թ. նոյեմբերի 24  
ք. Կապան

